

STEP INTO OUR CROSSROADS







Foreign &  
Commonwealth  
Office



INTERNEWS

Այս գիրքը պատրաստել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունը «Մանկական խաչմերուկ» ծրագրի շրջանակում՝ Երևանում Բրիտանիայի դեսպանության ֆինանսավորմամբ: Գրքում արտահայտված տեսակետները և կարծիքները կարող են չհամընկնել ֆինանսավորող կազմակերպության դիրքորոշման հետ:

This publication has been produced by Internews Media Support NGO within the framework of Kids' Crossroads project with the assistance of the British Embassy in Yerevan. The views and opinions expressed in this publication do not necessarily reflect the position of the financing party.

**Խմբագիրներ՝** ..... Նունե Սարգսյան, Հարություն Մանսուրյան, Մարինա Աղասյան,  
Արշալույս Մուրադյան, Իրակլի Բերուլավա, Նաիլյա Բաբաևա  
**Թարգմանիչներ՝**..... Խաչատուր Արունյան, Հարություն Մանսուրյան, Լուսինե Գրիգորյան  
**DVD արտադրություն՝** Լևոն Տաքսիլդարյան, Արթուր Ներսեսյան  
**Նկարիչ՝** ..... Ազաթա Բաղդյան  
**Գիզայն և էջադրում՝** Նատալի Հարությունյան

**Editors:** ..... Nounch Sarkissian, Harutyun Mansuryan, Marina Aghasyan,  
Arshaluys Muradyan, Irakli Berulava, Nailya Babayeva  
**Translators:** ..... Khachatur Adumyan, Harutyun Mansuryan, Lusine Grigoryan  
**DVD Production:** ..... Levon Taksildaryan, Arthur Nersesyan  
**Illustrations:** ..... Agata Badalyan  
**Design and layout:** ... Natalie Harutyunyan

Այս փորձիկ գունազարդ գիրքը շատ թանկ է մեզ համար, բոլոր նրանց համար, ովքեր վեց տարուց ավելի աշխատում են «Մանկական խաչմերուկ» ծրագրում և հեռուստատեսային հաղորդումներ են պատրաստում Հարավային Կովկասի երեք երկրների դպրոցականների մասնակցությամբ: Այս նախագիծը հատուկ տեղ ունի **Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ԻՆՏԵՐՆՅՈՒՄՆԵՐԻ** մասնագիտական կյանքում: Հսկայական զգացմունքային լիցքերը ստանում ու շոշափելի արդյունքը զգում են թե՛ ծրագրի անմիջական մասնակիցները, թե՛ կազմակերպությունների այլ աշխատակիցները:

Մի քիչ վիճակագրություն: 6 տարվա ընթացքում մոտ **150** դպրոցականներ ծանոթացան լրագրության այբուբենին, փորձեցին իրենց հաղորդավարի ու լրագրողի դերերում: **135** պատանիներ ամառային մեկ ամիս անցկացրեցին մեղիա ճամբարում Սև ծովի, ոմանք էլ՝ Միջերկրական ծովի ափին: 2004թ-ից պատանի լրագրողներն իրենց ավագ խորհրդատուների հետ պատրաստեցին **265** հեռուստահաղորդում՝ ավելի քան **1500** սյուժեներով, որոնք երեք երկրների երիտասարդների կյանքի պատմություններ էին և երիտասարդական հայացք էին կյանքին: Հաղորդումները եթեր հեռարձակվեցին խոշոր հեռուստաընկերություններով երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն: Դրանք տարբեր անուններ ունեին. **Հայաստանում՝ «Մենք ենք», Վրաստանում՝ «Չվենի էքսպրեսի» (Մեր մեպընթացը), Ադրբեջանում՝ «Քեչիդ դովրու» (Անցումային տարիք)**, բայց նույն ծրագիրն էին՝ գրաֆիկական, երբեմն էլ կառուցվածքային լուծումների տարբերությամբ:




Թվերի ու փաստերի հետևում շատ այլ բաներ էլ կան, որոնք հաճախ շոշափելի չեն, բայց կարևոր են և ազդեցիկ: Երեխաներից յուրաքանչյուրը, անկախ իր տարիքից ու ազգությունից, անցավ աշխատանքային դժվարությունների միջով՝ դառնալով գրեթե մասնագետ լրագրող ու գրեթե հասուն մարդ: Ամառային ճամբարն ու դրան հաջորդած աշխատանքը հսկայական ազդեցություն ունեցան յուրաքանչյուր տղայի ու աղջկա կյանքում՝ նրանց կայացման, մասնագիտացման, աշխարհընկալման, միմյանց հետ հաղորդակցության, հանդուրժողականության, ոչ կաղապարային մտածողության համար: Նրանք այդ ընթացքում հասցրեցին ընկերներ ձեռք բերել, սովորեցին պատասխանատու լինել իրենց արածների համար և մի քիչ էլ խաղաղարար դարձան:



Այս գրքում մենք հավաքել ենք 21 էսսե: Փոքրիկ բացահայտումների հեղինակներից շատերը հիմա արդեն մեծ մարդիկ են, ում համար «Մանկական խաչմերուկը» մնացել է անցյալում: Նրանց մի մասն աշխատող լրագրողներ են, մյուսները՝ այլ մասնագիտություններ են ընտրել: Կարողալով մեր ընտրած տարբեր երկրների, տարբեր տարիների և տարբեր տրամադրությունների այս պատմությունները՝ ընթերցողը գուցե շատ բան իմանա մեր համատեղ և բացառիկ փորձի մասին:

Գրքի մեջ դուք նաև սկավառակ կգտնեք, սկավառակի մեջ էլ՝ 6 տարիների ընթացքում պատրաստված պատմությունների ու ֆիլմերի ընտրանին:





This little fancy book is very dear to us, to all that have worked in the **Kids' Crossroads** project for over six years now, producing television programs with the participation of school-aged young people from the three countries of the South Caucasus. This project is special to the professional life of **INTERNEWS** in **Armenia, Georgia, and Azerbaijan**. Not only the direct participants in the projects, but also other staff of the organizations receive enormous emotional charges and feel the tangible impact.



As to the statistics, about **150** school-aged young people became familiar with the ABC of journalism over the course of six years, and tried out the roles of anchors and reporters. **135** young people spent one summer month in the media camp on the shores of the Black Sea, and some on those of the Mediterranean. From 2004 on, the young journalists worked with their mentors to prepare **265** television programs with over **1,500** stories that told the life stories of young people from the three countries and presented the young people's views on life. The programs were broadcast on large television companies in three languages: Armenian, Georgian, and Azerbaijani. They had different names: **"Menk Enk"** (**"We are"**) in **Armenia**, **"Chveni Express"** (**"Our Express"**) in **Georgia**, and **"Kechid Dovru"** (**"Transitional Age"**) in **Azerbaijan**. The three were the same program, with differences in graphics and structural solutions.

Many other things occurred behind the numbers and facts, which were often not tangible, but were important and influential. Each child, regardless of age and nationality, passed through the difficulties of the job to become almost professional journalists and virtually mature individuals. The summer camp and the employment that

followed greatly influenced the life of each boy and girl in terms of their development, professionalism, views of the world, abilities to communicate with one another, tolerance, and a non-stereotypical mindset.



In the meantime, they managed to make friends, learned to be responsible for their actions, and to some extent became peacemakers.

This book is a compilation of 21 essays. Many of the authors of discoveries are now grown-ups for whom the Kids' Crossroads is in the past. Some of them are working as journalists, while others have chosen other professions. By reading this selection of stories from different countries, different years, and different moods, the reader can learn a lot about our extraordinary shared experience.

The book also contains a DVD with the selection of reports and films made during the six years of the project.



# Սեղա Գրիգորյան

## Հայաստան

Դասարանում ինձ սկսեցին «տեռորիստ» անվանել, երբ վերադարձա «Մանկական խաչմերուկ» ծրագրի ամառային ճամբարից ու դասընկերներիս պատմեցի, թե ինչ ուրախ ու հետաքրքիր ժամանակ եմ անցկացրել՝ վրացի ու ադրբեջանցի երիտասարդների հետ մեկ ամիս մի հարկի տակ ապրելով: Կատակում էին, բայց ինձնից երկար ժամանակ պահանջվեց ապացուցելու, որ իսկապես կարող եմ ադրբեջանցի ընկերներ ունենալ, որ նրանք նման են մեզ և իրենք էլ մեզ պես թշնամու կերպարի կարծրատիպը հաղթահարելու խնդիրն ունեն:

**Երբ «Մենք ենք»-ը վերջապես եթեր դուրս եկավ, նույն դասընկերներս, ովքեր ինձ «տեռորիստ» էին անվանում, սկսեցին հարցախեղդ անել ծրագրի յասին: Արդյունքում՝ Նրանցից երկուսը հայտնվեցին հաղորդման հեղինակների թիմում:**

Այսպես սկսված մեդիա փորձառությունս մի քանի տարվա շարունակություն ունեցավ, ու դարձավ իմ ամենամեծ մասնագիտական դպրոցը, թեև որպես այդպիսին՝ դասընթացներ եղան միայն ամենակզբում, երբ հեռուստատեսության այբուբենն էինք սերտում: Իսկ ամենակարևոր դասերը ես սովորեցի, երբ «մեծ

մարդիկ» ինձ վստահեցին աշխատել տեսախցիկի հետ, մոնտաժել, ստեղծագործել, սցենարներ գրել՝ ընկերներիս հետ ստեղծել մեր հաղորդումը՝ մեր մասին, մեզ համար: «Մենք ենք»-ում ամենակարևոր դասերից մեկն էլ սխալվելով սովորելն էր, որովհետև Ինտերնյուսում անընդհատ նոր փորձարկումներ անելու միջավայր ու համարձակություն կա:

Իմ ամենօրյա խոսակցությունների թեմաները փոխվեցին, բազմազան դարձան: Շփում մասնագետների ու իմ հասակակիցների հետ Հայաստանում ու երկրից դուրս, ինքնուրույն որոշումներ ընդունելու կարևորություն, նախկին պատկերացումները նոր փորձով փոխարինելու պատրաստակամություն... Մի խոսքով այս ծրագիրը օգնեց մի քիչ ավելի արագ մեծանալ ու աշխարհը ճանաչել: Ավելի ուշ առիթ ունեցել եմ տարածաշրջանի երիտասարդների հետ նաև այլ ծրագրերի մասնակցել և ամեն անգամ ավելի հստակ եմ զգացել իմ ու մյուս մասնակիցների տարբերությունը, ովքեր կարծրատիպերը կոտրելու առիթ դեռ չէին ունեցել: Նրանք հաճախ վախենում էին երկխոսության առաջին քայլը անել՝ չենթադրելով անգամ, որ մի քանի օրից մեր շփումները ջերմ ընկերության էին վերածվելու:

Թե երեք երկրների մասշտաբով, թե հատկապես հայերիս շրջանում ձեռք բերած իմ ընկերները շատ գունավոր, անվերջ էներգիայով լցված, ինտելեկտուալ ու սեփական «եսի» տեղը «մենքում» լավ իմացող երիտասարդներ են դարձել: Նրանց միշտ կարող եմ գտնել՝ աշխարհի որ ծայրում էլ, որ լինեն (իրոք շատերս ենք ճամփորդում և շատ): Մենք կարող ենք կրկնել մեր պատանեկության խենթությունները, որ ստեղծեցինք ու կիսեցինք ծրագրի շնորհիվ: Եվ ինչ էլ որ անենք, վերջում, որպես կանոն, հիշում ենք ստուդիայի մեր անվերջ փորձերը, երբ ոչ միաժամանակ, բայց միասին ասում էինք. եթերում՝ Մենք ենք:



## Seda Grigoryan

Armenia



When I returned from the summer camp of the Kids' Crossroads project and told my classmates about the joyful and exciting time I had spent by living under the same roof with Georgian and Azerbaijani young people for one month, the class started calling me "a terrorist." Of course, they were joking, but it took me a long time to prove to everyone that I can actually have Azerbaijani friends and that they live like us and, like us, need to overcome the enemy image stereotype.

**When our Menk Enk show was finally aired, the classmates that had labeled me a terrorist flooded me with questions about the project and, eventually, two of them joined the show reporters team.**

My media experience, which began in this way, lasted some years and became my greatest professional school, although courses as such were delivered only in the very beginning, when we learnt the ABC of television. I learnt the most relevant lessons when "adults" trusted me to work with the camera, to edit, to create, and to write scripts, creating with my friends our program about us, for us. A key lesson in the "Menk Enk" show was

learning from mistakes, since Internews provides the environment and courage to experiment.

My everyday conversation topics changed: they became more diverse. Contacts with experts and my peers in Armenia and abroad, the importance of taking my own decisions, and the willingness to substitute old perceptions with new experiences... In a nutshell, this project helped me to grow up slightly faster and to start conceiving the world. Later, every time I had the opportunity of participating in other projects with young people from our region, I clearly felt the difference between myself and the other participants that had still not had a chance of crushing the stereotypes and were often afraid of making the first step in the dialogue, having no idea of the warm friendship that would grow out of our contacts in just a few days.

Speaking of friendship, I found friends in all three countries, especially among the Armenians, who are very colorful and energetic individuals with an adequate understanding of the place of their "ego" within "our collective ego." I can always find them in any corner of the world I go to (many of us do travel across continents) and act in the crazy ways that we crafted and shared through the project, and to say at the end, as always not concurrently, but jointly, "Menk enk!"

# Նանա Կալանդարիշվիլի

## Վրաստան

Վաղուց էր դա, չեմ էլ հիշում, ինչպես դիմեցի մրցույթին: Չեմ բացառում, որ մայրս էր ինձ գրանցել: Բայց լավ հիշում եմ, որ հենց 14-ամյակիս օրը՝ մայիսի 9-ին, զանգեցին Ինտերնյուսից և ասացին, որ առաջին փուլն անցել եմ ու պետք է պատրաստվեմ հաջորդին: Իսկ երբ անցա բոլոր փուլերն ու մեկնեցի ճամբար, երջանկությունից խենթացել էի:

Երեք շաբաթ առանց ծնողների՝ նոր մարդիկ, ուսուցիչներ, նկարահանումներ, ծով, դիսկոտեկ...

**Առաջին նյութս իշուկի յասին էր... Եվ տղայի, ով զթոսնել ցանկացողներին յան էր տալիս իր իշասայլակով: Պրոռյուսերը խստիվ արգելել էր չլքել ճամբարի տարածքը: Ծատ էի վախենում խախտել այդ կանոնը, բայց լավ նյութ ստանալու համար արեցի: Եվ ինձ հասկացան: Սյուժեն լավ ստացվեց, ջնայած սթենդափոք երևի 20 փորձով նկարեցինք...**

Լավ հիշում եմ, ինչպես էինք թոք-շոուի նախապատրաստվում. Երեվանի ու Բաքվի երեխաների հետ վազվզում էինք Ուրեկիիով մեկ և համոզում մարդկանց, որ մասնակցեն հաղորդմանը: Ամեն ինչ առաջին անգամ էր, և մենք շատ էինք հուզվում: Երեկոյան հավաքվում էինք ու քննարկում՝ ինչ ու ինչպես անել: Խառը խմբերի էինք բաժանված՝ ոչ երկրներով, և բոլորս մի թիմ էինք: Հիմա լավ եմ հասկանում, որ հազվադեպ է լինում, երբ մարդկանց խումբը մի թիմ է դառնում, թեկուզև կարճ ժամանակով:

Մեր ճամբարից 7 տարի է անցել, և ես մինչ այսօր էլ շփվում եմ շատերի հետ սոցցանցերում՝ անկախ ազգությունից: Բացի այդ մեր ճանապարհները հաճախ են հատվում տարբեր միջազգային ծրագրերում: Մեր սերնդի վրացի մասնակիցներից շատերն արդեն առաջատար հեռուստարկերությունների լրագրողներ են: Մենք Նիկա անունով 2 տղա ունեինք: Նրանցից մեկը բանաստեղծ է դարձել, և ես հաճախ եմ գնում նրա ստեղծագործական երեկոներին:

«Չվեցի էքսպրեսիում» ես մեկ տարի և՛ հաղորդավար էի, և՛ լրագրող: Ավելի քան 10 նյութ պատրաստեցի: Իհարկե, շատ հաճելի էր, որ փողոցում ինձ ճանաչում էին: Մեր ծրագիրն ինձ համար առաջին հերթին աշխարհը տեսնելու և ընկալելու հնարավորություն էր: Ես հասկացա՝ ինչ հետաքրքիր է շփվել ինձնից և իրարից խիստ տարբերվող մարդկանց հետ: Հասկացա, որ դա ամենևին էլ չի խանգարում ոչ ընկերություն անելուն, ոչ էլ միասին աշխատելուն: Ծատ կարևոր է, որ այդ տարիքում հնարավորություն ես ստանում մասնագիտություն ձեռք բերել, շփվել պրոֆեսիոնալ լրագրողների հետ: Ես շատ բաներ հասկացա, որոնց մասին դպրոցում հաստատ չէի էլ իմանա:





## Nana Kalandarishvili

Georgia

I no longer remember for certain how I decided to go to the competition; it was all a long time ago. Possibly, my mother noted my name in the list. I was then 14. I remember clearly my birthday on the 9<sup>th</sup> of May and the phone call from Internews: "You passed the first round and should prepare for the next stage, which is the testing" It was my first success in competitions, and I was crazy about happiness.

The camp meant three weeks without parents, new people, teachers, television shoots, the sea, and discos...



My first story was about a small donkey... and a boy who took around those wanting to go for a ride. The producer strictly warned us against leaving the camp territory and going far away. I remember how afraid I was of violating this rule, but for the sake of a good story, I went for it and... I got caught. The story was apparently quite good. Although, to be honest, I had to record the standup about 20 times.

I also remember clearly all of us together preparing the talk show in the camp, running around Ureki with the kids from Baku and Yerevan and looking for people that would agree to take part in the program. Everything was happening for the first time, and all of us were very nervous. And then, in the evening, we sat down and discussed what had to be done and how. In the camp, we were not divided by countries, but rather were one team; these are not big words, it was the reality of our summer. I now understand clearly that a large group of people rarely turns into a team, albeit for a short time.

Seven years have passed since the times of the camp, but I still keep in touch with many of the kids via social networks regardless of nationality. Besides, our paths frequently intersect in various international projects. As to the Georgian kids, many of the kids in our group became journalists and are working for the leading channels. We had two boys, two Nikas. One of them became a poet, and I frequently visit his readings.

I worked in the "Chveni Expressi" program for a year as both a journalist and an anchor. I made about ten stories. Of course, it was very pleasant for me to be recognized by people in the street. For me personally, our program was primarily an opportunity for better seeing the world and feeling how interesting it is to work and to communicate with a large number of people that are very different from one another, but it does not undermine their ability to work together and to be friends. Most importantly, I had a chance at such a young age to master a new profession, to communicate with professional journalists and to understand many things that I would have never learnt in school.



# Քյոնուկ ՄաՏեղովա Աղբբեջան

Անց որ երեկ լիներ: Չնայած անցել է արդեն 7 տարի: «Մանկական խաչմերուկից» է սկսվել իմ գիտակից կյանքը: Դա կյանքի հստակ ուղի էր՝ ինչպես դպրոցը, ինստիտուտը...

Մեկ ամիս տասնյոթ հոգով ուսանում էինք լրագրության հիմունքները: Նրանք, ովքեր մինչ այդ կասկածում էին՝ դառնալ, թե չդառնալ լրագրող, հստակ որոշեցին՝ դառնալ: Բացի ինձնից... Ընտրեցին վեցին: Հայտնվելով վեցյակում՝ ես այնքան էլ ուրախ չէի: Հիշում եմ իմ հիասթափությունն ու անարդարության զգացումը, քանի որ եզրափակիչ չէր անցել մտերիմ ընկերուհիս, ով հիմա լրագրող է աշխատում: Իսկ ես այսօր էլ շատ հեռու եմ այդ մասնագիտությունից:

**Այդ ժամանակ առաջին անգամ սցենար գրեցինք և աշխատեցինք օպերատորի հետ, առաջին անգամ լսեցինք այնպիսի բառեր, ինչպիսիս են՝ սթենդափո, «պետլիչկան», իմացանք՝ ինչու են օպերատորներն այդքան սիրում նկարել սպիտակ պատեր ու թղթեր, գիտակցեցինք, որ ինքներս պետք է քայլ տանք ծանր եռուտանիս...**

Վրաստան: Ծովափ: Առաջին անգամ արտասահմանում եմ, առանց ծնողների: Վրացիներ, հայեր... Ամենօրյա մրցություն: Ամեն թեման նոր փորձություն էր: Ով կնկարի լավագույն սթենդափո, ով կզրի լավագույն տեքստը, ումն է ամենահետաքրքիր թեման, ով արտասահմանության հետ խնդիրներ չունի, ինչպես լավ հարցազրույց անել, ով առաջինը կհասցնի «փախսցնել» օպերատորին: Նաև, ինչպես թաքնվել աթոռի տակ, երբ օրվա վերջում քննարկում են նկարածը: Ինչպես դիմակայել քննադատությանը և լաց չլինել, նաև ինչպես չմեծամտանալ, երբ քեզ գովում են:

Հետո վերադառնալով հայրենիք՝ կրկին թեմայի փնտրտուք, նկարահանում, մոնտաժ, տեքստի ձայնագրություն: Այդ ամենը պետք է համադրել դպրոցի և



անձնական կյանքի հետ: Դժվար էր, բայց միևնույն ժամանակ անհավանական հետաքրքիր ու հրապուրիչ:

Դա իմ առաջին աշխատանքն էր: Ես ստացա իմ առաջին աշխատավարձը: Իրականում շատ քիչ էր, բայց այն ժամանակ ինձ միլիոն էր թվում: Հիմա՝ 21 տարեկանում, երբ ասում եմ, որ սա իմ չորրորդ աշխատանքն է, որ աշխատել սկսել եմ դեռ դպրոցից, ինձ քչերն են հավատում: Այդ փորձի շնորհիվ բուռնում սովորելու տարիներին թարգմանիչ աշխատեցի ինֆորմացիոն գործակալություններից մեկում: Ինձ մի քանի անգամ առաջարկել են լրագրող աշխատել, բայց միշտ հրաժարվել եմ: Նախ՝ կրթությունն ինձ համար առավել կարևոր էր, հետո էլ՝ հստակ որոշել էի լրագրող չդառնալ: Տարօրինակ է, բայց՝ փաստ: Լրագրությունը պահանջում է վճռականություն և քաջություն: Ես ու ժուռնալիստիկան բնավորություններով չհամընկանք...

Ծրագիրն օգնել է ինձ հասկանալ կյանքի սկզբունքները՝ թե՛ լրագրության, թե՛ ընկերների ու թշնամիների նկատմամբ: Նախագիծը ինձ տվեց ընկերներ, հիանալի ուսուցիչներ՝ այս բառի ամենաիսկական իմաստով: Եվ վերջապես «Մանկական խաչմերուկը» ինձ սովորեցրեց զլխիկոր չկանգնել խաչմերուկում, այլ ճանապարհ գտնել: Ի՛նձ ճանապարհը:

## Kenul Mamedova

Azerbaijan

I remember it like yesterday, although seven years have already passed. The Kids' Crossroads was in a way the beginning of my conscious existence. It was a particular stage of life, like school, university, and the like.

That month during which we learnt the ABC of journalism each day influenced many of us. The ones that still doubted whether or not to become journalists decided for sure. Except for me... At the time, they chose six out of 70. As one of the six finalists, I was for some reason not happy; I remember the disappointment and the feeling of injustice about my best friend not making it. In fact she now works as a journalist. While I am so distant from the profession.


**Many of us wrote our first scripts, instructed the cameraman, learnt words like standup and loop, finally got to know why cameramen are so fond of filming white walls and paper, and realized that exactly we had to carry the heavy tripod.**

Georgia. The Black Sea coast. First time abroad without parents. Georgians. Armenians. Competitions. Daily. Every topic was a new challenge. Who will film the best standup? Who will write the best off-screen text? Who has the most interesting topic? Who has articulation problems? How should a person be interviewed correctly? How can one be the first to seize the cameraman? Or, how is it possible to hide underneath a chair at the end of the day when everyone watches what you have filmed? How can one withstand the criticism and not to cry? How can one avoid getting a swelled head when praised?

Then, upon return to my home country, I was constantly searching for new topics, filming, cutting, and recording text. And I had to combine all of it with my school studies and a teenager's private life. Kind of hard. But incredibly interesting and exciting!

It was my first job. The first salary in my life. A very small one, indeed, but made me feel like a millionaire at the time. Now, having turned 21, when I say that it is my fourth job and that I started working when I was in school, very few people believe me. Thanks to that experience, I started to work as a translator in a news agency while studying in the university. I rejected several offers to work as a journalist. On the one hand, I did not want the excessive burden; studies were clearly more important. On the other, I had clearly decided that I did not want to become a journalist. As strange as it may seem. It may be foolish to write it here, but it is true. Journalism is the most interesting profession, but its most typical trait is that it is a thankless job. It is my opinion. I think that journalism and I just did not get along because of our characters. Journalism requires steadfastness, firmness, fortitude, and courage.

From the Kids' Crossroads I got some principles of life. In relation to journalism, friends, and foes. The project gave me friends. It gave me great teachers in the high sense of the word. The Kids' Crossroads also gave me everything that I needed in order not to stand on the crossroads forever, but to choose the way forward. My way.





# Լևան Ջոբավա

Վրաստան

**2** 008-ին սկսվեց իմ ճանապարհը Վրաստանի կենտրոնական հեռուստատեսային ալիքներով: Սկզբում հայտնվեցի «Իմեդիում», հետո տեղափոխվեցի Հանրային հեռուստատեսություն: Բայց երբեմն կյանքն անհետաքրքիր ու ծանձրալի է դառնում: Եվ ես հիշում եմ «Չվենի էքսպրեսիում» անցկացրած ժամանակները:

**Այդ պահերին ուզում եմ հեռախոսափողում լսել ձեր պրոդյուսերի ինձ կանչող ձայնը:**

Ուզում եմ հայտնվել թբիլիսյան Լերմոնտով և Իաշվիլի փողոցների խաչմերուկում, որտեղ աշխատում էինք մեր հաղորդման վրա: Ուզում եմ վերադառնալ երրորդ հարկ, մեր նկարագարդած 32 սենյակը, որի բանալու կախազարդը դեղնած էր, որտեղ ծխել չէր կարելի, համակարգիչներն էլ հաճախ «կախվում էին»: Ո՞նց եմ այդ ամենը սիրում: Նախանձում եմ հիմա այնտեղ աշխատողներին... Եվ հուսով եմ, որ ինձ, այնուամենայնիվ, կզանգեն:

Իմ կյանքում լրագրությունը սկսվեց Ինտերնյուսի մրցույթից: Լավ հիշում եմ, որ մրցույթային նյութի սցենարը մայրիկիս մասին էի գրել: Հետո հարցազրույց անցա պրոդյուսերի հետ վրացերեն և ռուսերեն, հետո՝ սեմինար: Ինձ այնքան էլ լավ չէի պահում, բայց գլխավոր առաջադրանքը՝ սյուժեները, հաջողում էի, և դա ինձ դուր էր գալիս:

Եվ ահա ես վեց հաղթողներից մեկն եմ, և մենք գնում ենք հեռուստատեսային ճամբար Սև ծովի ափին՝ Չակվի: Սկզբում բոլորս էլ կաշկանդված էինք: Անգամ ես, որ սովորաբար շփվող եմ, չգիտեի՝ ինչպես ինձ պահել այլ երկրների հասակակիցներիս հետ: Բայց մի քանի օր հետո մենք մտերմացանք, և կյանքը շատ ավելի հետաքրքիր դարձավ: Եղել է, որ քնել



ենք դասի ժամանակ, ծովի չափ նկատողություններ են եղել, նաև ծով է եղել: Շատ բաներ առաջին անգամ էինք իմանում, սովորում էինք ճիշտ մոնտաժել և խելամտորեն ծախսել մեր գրպանի փողերը:

Ճամբարի երեք շաբաթն արագ ավարտվեց, և դրան հաջորդեց իմ երեք տարվա աշխատանքը «Չվենի էքսպրեսիում», հետո էլ՝ այլ տարածաշրջանային երիտասարդական ծրագրերում: Այդ կարճ ժամանակահատվածում ես պատրաստեցի ավելի քան հարյուր սյուժե և ֆիլմ: Համաձայնեք՝ քիչ չէ... Նաև հաղթող ճանաչվեցի մի քանի միջազգային փառատոններում:

Ծրագիրն ու ավագ գործընկերներս, ում հետ ամեն օր շփվում էի, ինձ սովորեցրել են ճանաչել ու հասկանալ մարդկանց, նաև չափը ճանաչել: Օպերատորներն ու վարորդները եղել են ոչ միայն մեր ստեղծագործական թիմի անդամները, այլ նաև իմ սյուժեների մասն են դարձել: Մեր պրոդյուսերից ես խորհուրդներ եմ ստացել, որ անգամ հայրս ինձ չի տվել: Ես ոչ միայն լրագրողական վարպետության դասեր եմ ստացել, այլ նաև՝ կյանքի: Ինտերնյուսը, հեռուստատեսությունը և մեր ծրագիրը փոխեցին նաև հետաքրքրություններս: Դա նման էր մի ընտանիքի ու տան, որտեղ ապրեցի 3 տարի: Եվ հիմա, երբ ծանձրանում եմ, ուզում եմ ժամանակը հետ պտտել, նորից նկարահանման դուրս գալ Թբիլիսիի Սոլուակի թաղամասից և մեր ընդհանուր ժողովներում քննադատություններ լսել նյութերիս մասին:

## Levan Jobava

Georgia

In 2008, I started my journey through the central television stations of Georgia. I first arrived at Imedi, before moving to the Public Television. Sometimes, whenever I get bored and disinterested, I recall the time spent in “Chveni Expressi” (“Our Express”).

*Then, I want to hear the phone ring and hear the voice of our producer inviting me to work in a new project.*

I want to find myself in the corner of the Lermontov and Iashvili streets in Tbilisi, where we worked on our show. I want to return to the third floor, to our room number 32, all covered with pictures, with a keychain that had turned yellow, computers that often hung, and a prohibition of smoking. But I so loved it all! I catch myself envying those that now work there...And I keep hoping that my phone will ring, after all.

In my life, journalism began with the competition in Internews. I remember very well writing the script to my competition story about my mother. Then, there was the interview with the producer in Georgian and Russian, followed by the seminar. I did not really behave, but I got the job of the stories done, and I enjoyed it.

I was selected among the six winners. We traveled to the television camp in Chakvi, on the shores of the Black Sea. In the very beginning, we all felt a bit uneasy. Even I, the outgoing type, did not know how to behave with peers from other countries. After some days, however, it became much cheerful. I became close friends with all the kids. There was sleep during lectures, a sea of remarks, and the real sea. We learnt many things for the first time: we learnt story editing techniques and thoughtful ways of spending the per diem.

But the three camp weeks ended. They were followed by three years of my work in the “Chveni Expressi” television show, and then, other regional youth projects. In this seemingly short period of time, I made over 100 stories and films. Apparently, not too few. Besides, I became the winner at several international festivals.

This project and our senior colleagues with whom I interacted every day taught me the ways of understanding people, maintaining a distance, and building relationships. Our cameramen and our drivers were not only a part of our production unit, but also a theme in my stories. I frequently got from our producer the kind of advice that I have not even received from my father. They taught me the mastery of not only journalism, but also life. Internews, television, and our project turned around my interests. It was like a home, a family in which I lived three years. Now, whenever I get bored and disinterested, I want to turn the clock backwards for three years, to go out again to shoot around the Sololaki district of Tbilisi and to attend our meetings to hear remarks about my stories.



# Էլինա Չիլիկարյան

Հայաստան

**Մենք ենք՝ ձեռքը ձեռքին տված, ջունջներս պահած... Այնպես ամուր ենք բռնել իրար, կարծես, եթե բաց թողնենք, Մի շատ կարևոր բան յեկրնդմիշտ կկորցնենք, կարծես հենց մենք ենք իրար պահում գետնին, որ հուզմունքից չթռչենք, չգոլորշիանանք, անէանանք կամ հավենք ու ծորանք հատակին...**

Կանցնի վեց տարի, և մենք նորից իրար ձեռք կբռնենք մեր կյանքի ամենապատասխանատու պահերին: Կցավենք ու կանհանգստանանք միմյանց համար, կտխրենք ու կուրախանանք միմյանց հաջողություններով: Ծիշտ այնպես, ինչպես այն օրն Ինտերնյուսի գրասենյակում:

Կասեք՝ վեց տարին ի՞նչ է որ, կմտածեք, թե ուռճացնում են օրվա կարևորությունը: Բայց ես մեկընդմիշտ կհիշեմ այդ օրը՝ որպես ամենաորոշիչներից մեկը իմ կյանքում: Տասնհինգ տարեկան էի, երբ հեռակառավարման վահանակի կոճակի մեկ սեղմումի շնորհիվ հայտնվեցի Ինտերնյուսի կապույտ պատերով խորհրդասենյակում՝ ընկերներիս ձեռքերը բռնած: Հիշում եմ՝ այդ պահին ես աշխարհում ամենից շատ ուզում էի անունս լսել: Եթե չլինեք այն օրը վստահ եմ՝ կդառնայի իրավագետ կամ տնտեսագետ, կամ մեկ այլ ...գետ, բայց անունս հնչեց ու ես դարձա լրագրող: Հիմա հեռուստացույց եմ նայում, որպեսզի մոտ ընկերներիս տեսնեմ էկրանին, որտեղից ժամանակին միասին էինք արտասանում կախարդական բառերը. «Եթերում՝ մենք ենք»:

Հենց այդ «Մենք ենք»-ի շնորհիվ ես անգամ մի վայրկյան չկասկածեցի մասնագիտություն ընտրելիս: Լրագրող բառը դարձավ ինձ համար հաճոյախոսություն, իսկ լրագրությունը՝ կոչում: Արդեն երկու տարի է, ինչ աշխատում եմ միջազգային ռադիոկայանում, բայց դեռ մի քիչ ամաչում եմ ինքս ինձ լրագրող

կոչել: Հիմա ամեն շաբաթ պատրաստում եմ «Կովկասյան խաչմերուկը», հիշելով իմ «մանկականը», որում բոլորն ավելի հանդուրժող էին, բարի ու պարզ, թեկուզև՝ ոչ այնքան պրոֆեսիոնալ: Հաճախ եմ կարոտում այն օրերը, երբ իմ ամենամոտ ընկերներից մեկն աղոթեջանցի էր, և մենք իրար հեռախոսային հաղորդագրություններ էինք գրում՝ առանց վախենալու հնարավոր հետևանքներից: Եվ ամեն շաբաթ մենք հանդիպում էինք հեռուստաէկրանին՝ մեր մանկական խաչմերուկում, որտեղ չկային քաղաքական գործիչներ, քարոզչություն ու աստվածություն:

Մեր վեցյակից հինգը լրագրող եմ հիմա Հայաստանի առաջատար հեռուստատեսային ու ռադիոընկերություններում: Հաճախ ենք հանդիպում, գրուցում, զվարճալի պատմություններ վերհիշում: Ամենօրյա աշխատանքն էլ է շատ բան հիշեցնում: Ձգում եմ, որ օրեցօր ավելի եմ մոտենում «լրագրողի» կերպարին ու ավելի հեռանում «Մանկական խաչմերուկից»: Բայց հենց թվում է, թե մի շատ կարևոր բան մեկընդմիշտ կորցնում եմ, ամուր բռնում ենք իրար ձեռք ու նորից շրթա ենք կազմում՝ չթողնելով հուզմունքից գոլորշիանալ, թռչել, անէանալ կամ հավել ու ծորալ հատակին...



## Elina Chilingaryan

Armenia

We are... hand in hand... holding our breaths... holding each other firmly as if we would forever lose something very important if we let go, as if we keep each other on the ground, saving each other from flying, evaporating, disappearing, or melting and flowing to the ground...

After another six years, we will again hold each other's hands at the most responsible moments of our lives. We will share each other's pain and worries. We will celebrate each other's successes. Just like that day, in the Internews office.

One may ask what the fuss is about the six years, and think that I am exaggerating the importance of the day. But I will remember the Day for all time, as one of the most decisive days in my life. I was 15 when a push of the push of a remote control button took me to the blue-walled conference room of Internews; and there I stood, holding my friends' hands. I remember the moment when I wanted, more than anything on earth, my name to be read out. Had it not been for the Day, I would surely become a lawyer, an economist, or some other professional, but my name was pronounced, and I became a journalist. I am now watching television in order to see my close friends on the screen, from which we would once together utter the magic words "Yeterum menk enk" ("we are on air").

Thanks to the "menk enk," I have not doubted my choice of profession for a split second. The word "journalist" became a compliment for me, and journalism became my vocation. For two years now, I am working in an international radio station, but I am still a bit shy about calling myself a "journalist." Now, every week, I prepare the Caucasus Crossroads, recalling my experience as a child, when everyone was more tolerant, kind, and

simple, albeit not as professional. I often miss the days when one of my closest friends was Azerbaijani, and we naively exchanged sms messages with no fear of potential consequences. Every week, we met each other on the television screen in our Kids' Crossroads, where there were no politicians, propaganda, and hatred.

Five of our six now work as journalists in the leading television and radio companies of Armenia. We often meet, talk, and recall fun stories, but I will not write about those stories today. Daily work also reminds me a lot, and I feel that, every day, I come closer to the image of a "journalist," moving all the further away from the Kids' Crossroads atmosphere.

But then, as soon as I feel like I am losing something important for ever, we firmly hold each other's hands and make a chain again, saving each other from flying, evaporating, disappearing, or melting and flowing to the ground out of excitement...



# Վալեն Նաբիև

Աղբրեշան

Երբ Գյանջայում հիմնեցին «Գանջաբազար» բերքը, մայրիկիս հրավիրեցին այնտեղ աշխատել: Ես հաճախ էի նրա հետ խմբագրություն գնում: Մի հիանալի օր էլ ինձ հրավիրեցին լրագրության կուրսերի: Յոթերորդ երկնքում էի:

Բաքվում մեզ հետ պարապում էին համալսարանի լրագրության ֆակուլտետի դասախոսներ, հեռուստատեսության հաղորդավարներ, ռեժիսորներ, օպերատորներ ու մոնտաժողներ: Ես նոր ընկերներ ձեռք բերեցի: Այդ ժամանակ սկսեցի նյութ նկարել Գյանջայում տեղակայված «Մոս քինդերդոլֆ» մանկատան մասին:

2006-ին, հերթական սեմինարից հետո, ես վերջապես մեկնեցի ճամբար: Ես առաջին անգամ էի շփվում արտասահմանցի հասակակիցներիս հետ: Մեզ առջևում սպասում էին սեմինարներ, գործնական աշխատանքներ, նյութերի, սոցիալական հոլովակների ինքնուրույն նկարահանումներ, նաև սրտամոտ գրույցներ, հաճույք և հանգիստ: Եվ ահա պատրաստ էին առաջին նյութերը, և մենք գնում էինք իսկական եթերի՝ մեր «Ամառային լուրեր Չակվիից» հաղորդմամբ: Այնպես ստացվեց, որ ես պետք է վարեի եթերը: Սկսեցի կարդալ տեքստը և հանկարծ հասկացա, որ հիմա ինձ է նայում ամբողջ Աջարիան: Ուրքս ուժեղ ցնցվում էր հուզմունքից: Բայց ես ինձ հավաքեցի: Երազանքս իրականացավ:

Մի օր մենք մեկնեցինք Քոբուլեթի՝ նյութ նկարելու Աբխազիայի փախստականների մասին: Թեման շատ սուր էր, և իմ նյութով շատերն էին հետաքրքրված: Այն ժամանակ ինձ ուրախացնում էր սեփական անձի կարևորության մանկական զգացումը: Երբեմն վատ տրամադրություն էլ էի ունենում, բայց պրոդյուսերի հանգստացնող ձայնը, մոնտաժողի ռոք երաժշտությունը, վախը՝ բարկացնել օպերատորին, օգտակար գրույցները դասավանդողների հետ, համակարգողի ժպիտն ու



երեխաների ընկերակցությունը չէին թողնում, որ տխրությունը երկար մնար:

Տարեկիցների ու մեծերի հետ գրույցները, գիշերային զրոսանքները ծովափով, շատ հետաքրքիր խորհուրդներն ու հրահագները փոխեցին ինձ: Ես դարձա առավել ինքնավստահ: 20 օրում հասցրեցի ընկերանալ, վիճել, հաշտվել և իմ ընկերների լեզվով նոր բառեր սովորել:

**Այն ժամանակ, երբ իջան յեր երկրների դրոշները, յենք թուրքս տխրել էինք, քանի որ արդեն շատ էինք սովորել յիմյանց:**

Բայց կյանքը շարունակվում է: Բոլորը վերադարձան իրենց երկրները: Ինձ դուր էին գալիս մեր նկարած նյութերը: Նորանոր հմտություններ էի ձեռք բերում: Գրասենյակը ինձ համար կարծես երկրորդ տուն լիներ:

Նետագայում՝ ճակատագրի բերումով, «Մոս քինդերդոլֆի» մասին պատմող «Մայրիկիս մոտ եմ ուզում գնալ» նյութիս համար փառատոնում արժանացա 3-րդ մրցանակի: Սկզբում այս նյութն ընդամենը էաքիզ էր, հետո դարձավ հեռուստանյութ, հետո՝ ֆիլմ: Այն ձևավորեց իմ լրագրողական զարգացման ուղին:



## Valeh Nabiev

### Azerbaijan

When they started to issue the new Gancabasar newspaper in Gyanja, my mother was invited to work there, and I often visited her after school. One fine day, I was offered a television journalism course. I was on top of the world!

In Baku, teachers of the Journalism Department of Baku State University, television newscasters, directors, cameramen, and editors worked with us. I found new friends, derived pleasure from the abundance of needed and interesting information. During that period, I started to film a story about the “SOS Kinderdorf” orphanage in Gyanja.

In 2006, after another one of the seminars, I finally travelled to the camp. It was my first encounter with peers of another nationality. We were going to have the training, practical classes, independent filming of stories and public service announcements, as well as heartfelt conversations, fun, and rest. The first stories were soon ready, and we were preparing for the real broadcast of our program called Summer News from Chakvi. By pure accident, I happened to be program host. Having rehearsed the unfamiliar text only once, I started to speak on live air and realized that all of Ajaria was watching me. My leg trembled so badly that I could not stop it. But I did it. My dream came true.

Once we went to Kobuleti to film a story about refugees from Abkhazia. It was a very hot topic, and everyone showed an interest in my story. I was overwhelmed with the childish feeling of my own importance. At times, the emotions and feelings were disturbing. There

was at times a bad mood, but it could not last long because of the producer’s soothing voice, the editor’s rock music, the fear of making the cameraman angry, the supportive talks with the instructors, the coordinator’s smiles, and the company of the kids.

I changed as a result of the conversations with my peers and adults, the seaside promenades at night, the very interesting advice and instructions, and much more. I became more confident about filming not only the story, but also my own plot—that of life. I found a very loyal friend. In 20 days, I managed to make friends, to fall out, to be reconciled, to learn words in other languages of the Caucasus, and even to play ping pong. The last day was the saddest time.

*As our state flags were pulled down, our hearts kept getting heavier. We had had time to get used to one another and to the whole setting.*

But life went on. Everyone returned to their home countries. I started liking the stories we filmed in other towns. I kept learning new things. The office became my second home, the place other than home where I felt comfortable.

Ironically, my story entitled “I want to go to mom” about the SOS KINDERDORF orphanage got the third prize in the 7th International Audio-visual Festival. It was initially a sketch that later turned into a story and subsequently into a film. It mirrored my evolution as a journalist.



# Զամիլյա Ահմեդադե

